ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 572 - Ա

27 հոկտեմբերի 2021 թ.

«ՍԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշումը և «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Արամ Նիկողոսյանի 2021 թվականի հոկտեմբերի 26-ի Մ-21071-2021 գրությունը

որոշում եմ՝

1. Հաստատել «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2021-2024 թվականների եռամյա զարգացման ծրագիրը:

27.10.2021

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք.Գավառ

<<Սևանի ԲԿ>> ՓԲԸ-ի երեք տարվա

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՐԱՄ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

<<ՍԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ-ի 2021-2024ԹԹ.

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Բժշկական կենտրոնը մատուցում է հիվանդանոցային, արտահիվանդանոցային և ՇԲՕ ծառայություններ և սպասարկում է Սևան քաղաքի տարածաշրջանի թվով 37500 և Սևան քաղաքի 26000(որից մանկական՝ 6500)ազգաբնակչության:

ԳԼՈՒԽ 2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Պետության կողմից երաշխավորված պետական նպատակային ծրագրերի շրջանակներում բժշկական կազմակերպությունը իրականացնում է

- Բժշկական օգնություն և սպասարկում
- Բնակչությանը կանխարգելիչ, բուժական, դեղորայքային օգնության ցուցաբերում
- Ախտորոշիչ հետազոտությունների, վերականգնողական բուժման բժշկական փորձաքննության անցկացում
- Հարբժշկական և այլ բնույթի ծառայությունների տրամադրում

Գաղտնիք չէ, որ այսօր շուկայական մրցունակության կարևոր նախադրյալը և թելադրող ուժը որակն է և վստահությունը բժշկական հաստատության հանդեպ: Այս սկզբունքից ելնելով՝ Սևանի ԲԿ ՓԲԸ-ն առաքելություն է ստանձնել հնարավորինս անել հաստատությունը որակյալ մասնագետներով:

Կազմակերպության հիմնական առաքելությունը ազգաբնակչության բուժ սպասարկումն է, բնակչի նկատմամբ վերաբերմունքը, հոգատարությունը, անհատական մոտեցումը, պատասխանատվության զգացումը:

Առաքելությունների շարքում ընդգրկված են նաև.

- ✓ Այնպիսի միջոցառումների կազմակերպումը և խորհրդատվական ծրագրերի իրականացումը, որի շրջանակներումում կբարձրանա ծնելիությունը տարածաշրջանի ակտիվ վերարտադրողական տարիքի կանանց շրջանում :
- ✓ Առողջության պահպանման առաջնային օղակի բուժանձնակազմի վերապատրաստումների կազմակերպումը՝ կապված ինչպես պրոֆիլակտիկ և ընդհանուր, այնպես էլ մանկական հիվանդությունների բուժման հետ:
- ✓ Մահացության հնարավոր ռիսկերի նվազեցումը

Այս նպատակով առողջության առաջնային պահպանման բժշկի գործառույթները պետք է առավելագույնս ուղղել հիվանդությունների վաղ հայտնաբերմանն ու կանխարգելմանը՝ սկրինինգային ծրագրերի իրականացման, իմունականխարգելման գործընթացի բարելավման և այլ կանխարգելիչ ծրագրերի իրականացման միջոցով:

ԳԼՈՒԽ 2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

4. Բժշկական կենտրոնի նպատակն է հեռանկարային զարգացման ծրագրի տրամաբանական հիմքում ստեղծել այնպիսի միջոցառումների համակարգ, ինչպիսին է.

- Բուժօգնության որակի ապահովումը
- Բուժօգնության մատչելիությունը և հասանելիությունը
- Մասնագիտական գործառույթի իրականացումը(բուժ անձնակազմի՝ պարբերաբար վերապատրաստման դասընթացների մասնակցություն, դրանց հասանելիությունը և փորձի փոխանակում)

- Ռեսուրսների ճիշտ և օպտիմալ օգտագործումը
- Հնարավոր ռիսկերի վերահսկողությունը՝ սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների վաղ հայտնաբերում և կանխարգելում,այդ թվում՝ տարափոխիկ հիվանդությունների՝ՄԻԱՎ/ՁԻԱՀ կանխարգելումը:
- Հիգիենիկ և հակահամաճարակային անվտանգության ապահովումը և նորմերի խիստ պահպանումը
- Ազգաբնակչության նպատակային խմբերի պատվաստումների գործընթացում բարձր ընդգրկվածությունը, որը կկանխարգելի հիվանդությունների սրացումը և մասսայական բնույթի տարածումը:
- 18 տարեկանից բարձր ազգաբնակչության զարկերակայնի ճնշման վաղ հայտնաբերումը, ՄԶՑ-ի ցուցանիշների սկրինինգը, ՊԱՊ քսուքը 30-60տարեկան կանանց և շաքարային դիաբետը 35-68տարեկան անձանց համար:
- Ֆիզիոթերապևտիկ ծառայությունների ցանկի ընդլայնում և արդիական սարքավորումներով համալրում
- Մանկաբարձական ծառայությունը նոր և ժամանակակից տեխնիկայով վերազինումը, ինչպես նաև վաղաժամ նորածինների համար պայմանների ստեղծումը չափոռշիչներին համապատասխան
- ՇԲՕ ծառայության մեքենաների հագեցվածությունը համապատասխան սարքավորումներով
- Դիահերձարանի կահավորումը չափորոշիչների պահանջներին համապատասխան
- Լաբորատոր ախտորոշիչ ծառայության բիոքիմիական և կլինիկական հետազոտությունների ծավալի ընդլայնումը

- Վերակենդանացման պալատը նոր սարքավորումներով համալրումը և այլն:
- Սևանի ԲԿ ՓԲԸ –ն գտնվում է տարածաշրջանի կենտրոնում և մոտ է Երևան քաղաքին , հետևաբար գերագույն նպատակներից մեկը միջմարզային բժշկական կենտրոն դառնալն է , քանի որ բժշկական կենտրոնը ունի բոլոր :

ԳԼՈՒԽ 3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Ինչպես արդեն նշել ենք, Սևանի բժշկական կենտրոնի կողմից բժշկական օգնությունը և սպասարկումը իրականացվում է հիվանդանոցային և արտահիվանդանոցային ձևերով:

Նշենք նաև, որ բժշկական կենտրոնի կազմում են գտնվում Ծաղկունքի, Գեղամավանի, Վարսերի և Գագարինի ԲՄԿ-ը:

Հիվանդանոցային մասով կազմակերպության գործունեության մեջ զգալի ծավալ կազմող ծառայություններն են.

- ✓ Թերապևտիկ պրոֆիլի ծառայությունները, որը ներառում է մանկական և ինֆեկցիոն ծառայությունները ևս:
- ✓ Վիրաբուժական պրոֆիլի ծառայությունները, լապորասկոպիկ և անոթային վիրաբուժության ներմուծմամբ:
- ✓ Լաբորատոր և ֆունկցիոնալ ախտորոշիչ

- ✓ Արտահիվանդանոցային մասով կազմակերպության գործունեության մեջ զգալի ծավալ կազմող ծառայություններն են.

1.ԱԱՊ, այդ թվում՝

- ✓ Լաբորատոր ախտորոշիչ հետազոտություններ
- ✓ Իմունոկանխարգելիչ հետազոտությունների անցկացում
- ✓ Առողջ երեխայի բուժ սպասարկման ծավալներ

2.Նեղ մասնագիտական ծառայությունները, որի մեջ մտնում են

- ✓ Սոց փաթեթի շահառուների սպասարկումը
- ✓ Դիսպանսերային հիվանդների սպասարկումը ըստ չափորոշիչների
- ✓ Սան գրքույկների տրամադրումը
- ✓ 0-18 տարեկան երեխաների անվճար հետազոտությունը ըստ չափորոշիչների և այլն:

ԱԺԻՆ II. ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության առողջության առաջնային պահպանման ոլորտի զարգացումը դիտարկվում է որպես առողջապահական համակարգի բարեփոխումների հիմք, քանի որ այն հանդիսանում է բնակչությանը ցուցաբերվող բժշկական օգնության հիմնական օղակ, որն ապահովում է անվճար բուժօգնություն բոլորի համար, ինչն էլ նպաստում է բնակչության: Այսօր Սևանի ԲԿ-ում բարելավվել են շենքային և աշխատանքային պայմաններ:

Սակայն պետք է նշել,որ դեռևս կան գործոններ, որոնք ազդում են կազմակերպության գործունեության վրա , դրանք են՝ պետ պատվերի շրջանակներում ծառայությունների մատուցման պայմանգիրը կնքելիս հաշվի է առնվում նախորդ տարվա փաստացի կատարված աշխատանքի ծավալը, ինչը թույլ չի տալիս ընդլայնել պետ պատվերով բուժման ծրագրի ծավալը, և հաշվի չի առնվում բնակչության այն խավի թիվը, որոնք օգտվում են անվճար և արտոնյալ պայմաններից(I, II, III կարգ, սոց անապով խմբերում ընդգրկված , փարոսակիրներ՝ 30 և ավել բալից օգտվողներ, ոստիկանության աշխատակիցներ, զին ծառայողներ և նրանց ընտանիքի անդամներ):

Այսօր դարաշրջանը տեխնոլոգիական և տեղեկատվական զարգացման ամենաբարձր փուլում է գտնվում, հետևաբար հասարակության կողմից առավելությունը և նախապատվությունը տրվում է այն բժշկական հաստատություններին, որոնք հագեցած են ժամանակակից տեխնիկայով, իսկ քանի որ բժշկությունը այն ոլորտն է , որտեղ հետազոտությունները շաղկապված են մեկը մյուսի հետ, ապա այս դեպքում բնակիչը նախընտրում է դիմել այնպիսի բուժ հաստատություն՝ ավելորդ տեղաշարժի սահմանափակման նպատակով:

Այս խնդրի հետ կապված՝ առաջարկում ենք , մարզային համայնքներում ստեղծել միջմարզային բժշկական կենտրոն, որը հագեցած կլինի ախտորոշիչ հետազոտությունների, վերականգնողական բուժման, բժշկական փորձաքննության անցկացման համար անհրաժեշտ բոլոր սարքավորումներով, մասնագետներով և աշխատանքային պայմաններով:

Տարիների ընթացքում բժշկական կենտրոնի առջև կուտակվել են այնպիսի կարևոր խնդիրներ, որոնց լուծումից է այսօր կախված ինչպես առաջնային,

այնպես էլ հիվանդանոցային բուժսպասարկման որակի և մատչելիության բարձրացումը:

Այդ խնդիրներն են.

- ✓ Մասնագետների պակասը
- ✓ Կադրերի ծերացումը
- ✓ Որոշ բժշկական գույքի սակավությունը կամ բացակայությունը
- ✓ Շենքային որոշ տարածքների՝ դիահերձարանի, ռենտգեն կաբինետի ոչ բարվոք վիճակը:
- ✓ Պետ պատվերի ծավալների սահմանափակությունը,
- ✓ Միաժամանակ աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության, երեխաների բժշկական օգնության, մանկաբարձական և գինեկոլոգիական բժշկական ծառայության , անհետաձգելի բժշկական օգնության համար պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման պայմանագրով նախատեսված գումարների նախօրոք պլանավորումը և ժամանակացույցով դրանց կատարումը հնարավոր չէ : Այն կախված է ազգաբնակչության դիմելիությունից, հիվանդություններից, իսկ կանխատեսել հիվանդների հոսքը հնարավոր չէ:

Առաջարկում եմ այն ծառայությունների մասով, որոնք տարվա կտրվածքով թերակատարվում են, վերջիններիս համար նախատեսվող գումարները օգտագործել այլ ծառայությունների իրականացման համար:

7

ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Սևան քաղաքը , լինելով տարածաշրջանի կենտրոնական քաղաք, ինչպես նաև զբոսաշրջության համար լավագույն մարզկենտրոն, ունի զարգացման բոլոր նախադրյալները:

Բժշկական կենտրոնի հեռանկարային զարգացման ընդլայնման նախադրյալներից է մրցակից շուկայում նոր ծառայություններով հանդես գալը, որը կկանխի հիվանդների հոսքը այլ բժշկական կազմակերպություններ որն էլ կնպաստի եկամուտների հոսքին բժշկական կենտրոն:

Բժշկական կենտրոնի զարգացմանը խոչընդոտող հիմնական ռիսկերն են

- Կադրերի ծերացումը
- Մասնագետների արտահոսքը երկրից կամ տարածաշրջանից
- Օպտիմալացումը, քանի որ հարաբերությունը բժիշկ/ազգաբնակչություն նույնն է, իսկ օպտիմալացումը բերում է լրացուցիչ ծանրաբեռնվածության Մատուցվող ծառայությունների մասնակի ֆինանսավորումը կամ կասեցումը:

ԳԼՈՒԽ 9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Իրականացվելիք խնդիրների լուծման նպատակով բժշկական կենտրոնը լուրջ քայլեր է ձեռնարկում նոր ներդրված ծառայությունների մատչելիության

և հասանելիության, որակի բարձրացման, հետագա զարգացման, կիրառական մեթոդների և մեխանիզմների արդիականացման ուղղությամբ՝ միաժամանակ նպատակ ունենալով այս ծառայությունների շարքը ընդլայնել և հասնել

ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ ընդլայնել առողջապահության ոլորտի ֆինանսավորման հնարավորությունները, մարզպետարանի, տարբեր բարեգործական կազմակերպությունների, անհատ բարերարների աջակցությունը

Տարեցտարի մեր երկրում կայուն կերպով մեծանում է վճարովի բժշկական ծառայությունների սեգմենտը: Արդյունքում հարկ է դառնում բժշկական մենեջմենթի կիրառման անհրաժեշտությունը ԲԿ-ի կառավարման համակարգում:

Այն է.

- ✓ ճիշտ պլանավորել աշխատանքը կիրառել լծակներ,որոնք թույլ կտան գնահատել և վերահսկել այդ աշխատանքի արդյունավետությունը:

  ԲԿ-ի կայուն զարգացման շրջանակներում շարունակելու են մնալնոր տեսակի ծառայությունների ներմուծումը, հասանելիության և մատչելիության աստիճանի բարձրացման ու որակի և վստահությանշարունակական բարելավումը: